

# ՏՆՏԵՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ՝ ՀՀ-ՈՒՄ ԲԱՆՋԱՐԱԲՈՍՏԱՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՔ

### ՎՈՒՈՂՅԱ ՄԱՆԱՅԱՆ

Բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացմանը նպաստող կարևոր գործոններ են մասնագիտացման խորացումը և համակենտրոնացումը: Ենթաճյուղի տնտեսական արդյունավետությունը անհամեմատ ավելի բարձր է այդ մշակաբույսերին զգալի ցանքատարածություններ հատկացրած մասնագիտացված տնտեսություններում, ինչն էլ թույլ է տալիս նրանց աճի ու զարգացման կենսաբանական գործընթացում արմատավորել առաջավոր տեխնոլոգիաներ: Մասնագիտացված տնտեսություններում միավոր ցանքատարածության հաշվով ավելի բարձր է բերքատվությունը, ցածր են արտադրանքի ինքնարժեքը ու աշխատածախսերը՝ և, հետևաբար, բարձր է նաև ենթաճյուղի շահութաբերության մակարդակը:

Բանջարաբուծության և բոստանաբուծության մասնագիտացման խորացումը և համակենտրոնացումը իրականացվում են առանձին տնտեսություններում, արտադրական ստորաբաժանումներում և տարածաշրջաններում ապրանքային ենթաճյուղերի ու արտադրությունների կրճատման և բանջարաբուստանային մշակաբույսերի ցանքատարածությունների, աշխատուժի և ստացված արդյունքների կենտրոնացման, ինչպես նաև արտադրության ինտենսիվացման հիման վրա:

Հայաստանի ագրոկլիմայական պայմանները միանգամայն բարենպաստ են բարձրարժեք, շուկայական մեծ պահանջարկ ունեցող և արտաքին շուկայում մրցունակ բանջարաբուստանային մշակաբույսերի լայն տեսականի աճեցնելու համար:

ՀՀ-ում աճեցվող բանջարաբուստանային մշակաբույսերի տեսականին, ըստ ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների, խիստ տարբերակված է: Եթե ցածրադիր գոտու ինտենսիվ ջրովի երկրագործության պայմաններում աճում են բարձրարժեք և շուկայական մեծ պահանջարկ ունեցող ջերմասեր մշակաբույսեր (լոլիկ, պղպեղ, վարունգ, սմբուկ, վաղահաս կաղամբ և այլն), ապա նախալեռնային և լեռնային գոտիներում՝ համապատասխանաբար միջահաս և ուշ հասունացող ցրտադիմացկուն բանջարաբուստանային մշակաբույսեր (կաղամբ, գլուխ սոխ, սեղանի ճակնդեղ ու գազար, բողկ և այլն), ինչպես նաև տարբեր կանաչիներ ու տարածման սահմանափակ արեալ ունեցող բանջարեղենի այլ տեսակներ:

Պատմականորեն մասնագիտացված տնտեսությունների մեծ մասը տեղաբաշխված է խոշոր քաղաքների և արդյունաբերական կենտրոնների մերձքաղաքային գոտիներում, որտեղ ինտենսիվ տնտեսավարման պայմաններում դիտվում է ենթաճյուղի ավելի կատարելագործված կազմակերպում: Այսպես, ՀՀ բանջարաբուստանային մշակաբույսերի համախառն բերքի մեջ առանձնահատուկ տեղ է հատկացվում Երևանի մերձքաղաքային գոտում՝ Արարատյան դաշտին և նրան հարող նախալեռնային գոտում, որտեղ կենտրոնացված են հանրապետությունում արտադրվող բանջարեղենի 75%-ը և բուստան-պարենային մշակաբույսերի (ծմերուկ, սեխ և դդում)՝ 98-99%-ը, որոնց ցանքատարածությունները հիմնականում տեղաբաշխված են ցածրադիր գոտում ( Արարատյան դաշտում, Արարատի և Արմավիրի մարզերի գյուղացիական տնտեսություններում): Այստեղ բանջարաբուստանային մշակաբույսերի համակենտրոնացումը պայմանավորված է ոչ միայն բարենպաստ ագրոկլիմայական պայմաններով, այլև սոցիալ-տնտեսական գործոններով (մասնավորապես, մերձքաղաքային ու տրանսպորտային հարմար տեղադիրքով, որակյալ աշխատուժի, հումքի արդյունաբերական վերամշակման ձեռնարկությունների առկայությամբ և այլն): Ընդ որում, Երևանի մերձքաղաքային գոտում գործող մասնագիտացված տնտեսություններում բաց գրունտի բանջարաբուծությունը, որպես կանոն, զուգակցվում է ջերմոցային տնտեսություններում աճեցվող բանջարանոցային մշակաբույսերի հետ, ինչը թույլ է տալիս ամբողջ տարին քաղաքային բնակչությանը ապահովել թարմ բանջարեղենով: Այստեղ սպառման մակարդակը բարձր է նախատեսվող չափաքանակից, իսկ արտադրության մակարդակը զգալիորեն գերազանցում է ներքին շուկայի պահանջարկին: Մերձքաղաքային գոտու տարածաշրջաններում ռազմավարությունը պետք է նպատակաուղղվի ապրանքարտադրող ենթակառուցվածքների զարգացմանը, տարածաշրջանների արտադրանքը ժամանակին և լրիվ ծավալներով սպառման շուկաներ հասցնելու ապահովմանը: Բանջարեղենի հետբերքահավաքային պահպանման և սառնարանային համակարգի ստեղծման միջոցով կարելի է մասնագիտացված բանջարաբուծությունը տեղաշարժել նաև նախալեռնային ու լեռնային գոտիներ:

Բանջարեղենի արտադրության պետական աջակցությունը ավելի մեծ չափերով պետք է իրականացվի անբարենպաստ ագրոկլիմայական, ժողովրդագրական և սոցիալական պայմաններ ունեցող լեռնային գոտում, որտեղ արտադրությունը սահմանափակվում է օբյեկտիվ պատճառներով, իսկ բնակչության մատակարարման պահանջարկը պահպանվում է:

Վերամշակող արդյունաբերության պահանջներին համապատասխան՝ հումքային գոտում ստեղծվում է բանջարեղենի այնպիսի արտադրություն, որը համապատասխանում է արդյունաբերական չափանշվածքներին, այսինքն՝ ունի բարձր որակ և հնարավորություն է տալիս հումքով հավասարաչափ լիաբեռնել արդյունաբերական ձեռնարկությունները: Հետևաբար, հումքային գոտում ստեղծվում են մասնագիտացված տնտեսություններ, որոնք բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածու-

թյունների համակենտրոնացման հետ մեկտեղ տեղաբաշխվում են պահածոների գործարանների հարևանությամբ: Սակայն, քանի դեռ ներքին շուկայի սպառողը սննդի օրաբաժնում չի օգտագործում ֆիզիոլոգիական նորմերին համապատասխանող բանջարեղենի հաշվեկշռված տարբեր տեսակներ, ինչպես նաև հումքը վերամշակող ձեռնարկություններում չեն ներդրվել պահածոյացման նոր տեխնոլոգիաներ, դրանց մեծածավալ ապրանքային արտադրությունը տնտեսապես աննպատակահարմար է: Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ենթաճյուղի արտադրանքի հիմնական սպառումը իրականացվելու է արտաքին շուկայում, որտեղ պահածոները (հատկապես տոմատը) ունեն մեծ պահանջարկ: Ուստի բանջարաբուծության մասնագիտացման խորացման և համակենտրոնացման համար առաջին հերթին պետք է լուծել արտահանման շուկաների և հումքի արդյունաբերական վերամշակման նոր տեխնոլոգիական հոսքագծերի արմատավորման խնդիրները:

Արարատյան դաշտի ինտենսիվ երկրագործության գոտում բարձրարժեք և շուկայական մեծ պահանջարկ ունեցող ջերմասեր բանջարաբուստանային մշակաբույսերի ցանքատարածությունների համակենտրոնացումը պայմանավորված է նաև ջրովի երկրագործության զարգացմամբ, քանի որ այդ մշակաբույսերը խիստ պահանջկոտ են բավարար խոնավության ապահովվածության նկատմամբ (ջրովի հողերի վրա բանջարեղենի բերքատվությունը 18-20%-ով, իսկ բոստան-պարենային մշակաբույսերինը՝ 50-70%-ով ավելի բարձր է, քան անջրդի պայմաններում):

Ենթաճյուղի մասնագիտացման խորացումը և արտադրության համակենտրոնացումը անհրաժեշտ պայմաններ են ստեղծել բերքի հավաքման տեխնիկական և արտադրանքի ապրանքային վերամշակման համալիրները բարձր արտադրողականությամբ օգտագործելու համար, որը թույլ է տալիս մի շարք տնտեսություններում միավոր արտադրանքի հաշվով աշխատածախսերը կրճատել 2,5 անգամ, իսկ արտադրանքի ինքնարժեքը իջեցնել 1,7 անգամ:

Մասնագիտացված բանջարաբուծական տնտեսությունները համարվում են բանջարեղենի հիմնական մատակարարողները (բանջարեղենի արտադրության մեջ մասնագիտացված տնտեսությունների տեսակարար կշիռը վերջին տարիներին կազմում է 68-70%):

Բանջարաբուծության արդյունավետության վրա ինտենսիվացման միջոցառումների հետ զուգակցված արտադրության համակենտրոնացման և մասնագիտացման խորացման դրական ազդեցության մասին է վկայում բազմաթիվ բանջարաբուծական տնտեսությունների փորձը: Այսպես, աղյուսակ 1-ում բերված են Շիրակի մարզի Գյումրիի մերձքաղաքային գոտում գտնվող Ախուրյանի տարածաշրջանի մասնագիտացված բանջարաբուծական ընտրովի գյուղացիական տնտեսությունների աշխատանքի արդյունքները, որոնք հստակ պատկերացում են տալիս ենթաճյուղի համակենտրոնացման առավելությունների մասին:

**Աղյուսակ 1**

**Բանջարաբուծության համակենտրոնացման արդյունավետությունը Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի մասնագիտացված բանջարաբուծական ընտրովի գյուղացիական տնտեսություններում (2009 թ.)\***

գյուղացիական տնտեսությունների խմբերը՝ ըստ բանջարեղենի ցանքատարածությունների միջին չափերի (հա)	խմբում գյուղացիական տնտեսությունների քանակը	գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում		բերքատվությունը (գ/հա)	19-ի ինքնարժեքը (դրամ)	աշխատատեղերը 1 9-ի հաշվով (մարդ-ժ)	շահույթը 1 հա բանջարեղենի ցանքատարածության հաշվով (հազ. դրամ)	շահութաբերության մակարդակը (%)
		բանջարեղենի ցանքատարածությունները (հա)	բանջարեղենի համախառն բերքը (9)					
մինչև 0,3 հա	11	1,7	669,8	394	17400	1,7	1521	8,7
0,3-0,5	4	3,78	1564,9	414	14040	1,6	1719	12,2
0,5-ից ավելի	5	7,61	3515,8	462	11700	1,5	3939	33,7
ընդամենը	20	13,09	5694,1	435	13500	1,57	2868	21,2

Ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալներից, համակենտրոնացման մակարդակի հետ են կապված բանջարաբուծության տնտեսական արդյունավետության բոլոր հիմնական ցուցանիշները՝ բերքատվությունը, արտադրանքի ինքնարժեքը և շահութաբերության մակարդակը: Ըստ միագումար բոլոր ցուցանիշների՝ լավագույն տնտեսական արդյունքներ ապահովում են 0,5 հա-ից ավելի բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածություններով տնտեսությունները: Արտադրության ծավալների ավելացման հետ մեկտեղ՝ տեխնիկայի և աշխատուժի արտադրողական օգտագործման հիման վրա ստեղծվում են օբյեկտիվ պայմաններ առաջավոր տեխնոլոգիայի կիրառման համար:

Բանջարեղենի ցանքատարածությունների համակենտրոնացման հետ մեկտեղ ենթաճյուղի տնտեսական արդյունավետության բարձրացման վրա մեծ ազդեցություն է ունենում նաև մասնագիտացման մակարդակը (տե՛ս աղյուսակ 2):

\* Հավաքվածները կատարել ենք Ախուրյանի տարածաշրջանի Բենիամին, Կապս և Հոռոմ գյուղական համայնքների ընտրովի գյուղացիական տնտեսությունների տվյալների հիման վրա:

**Աղյուսակ 2**

**Բանջարաբուծության մասնագիտացման մակարդակի արդյունավետությունը Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի բանջարաբուծական ընտրովի գյուղացիական տնտեսություններում ( 2009 թ.)\***

Գյուղացիական տնտեսությունների խմբերը ապրանքային արտադրանքի կառուցվածքում բանջարեղենի տեսակարար կշռով (%)	Խմբում գյուղացիական տնտեսությունների քանակը	բանջարեղենի տեսակարար կշիռը (%)		բաժին է ընկնում գյուղացիական տնտեսությանը		բերքատվությունը (ց/հա)	աշխատատեղերը, 1ց-ի հաշվով (մարդ-ժ)	1ց-ի ինքնաթիվը (դրամ)	շահութաբերության մակարդակը (%)
		ապրանքային արտադրանքի կառուցվածքում	ցանքատարածությունների կառուցվածքում	բանջարեղենի ցանքատարածությունները (հա)	բանջարեղենի համախառն բերքը (ց)				
մինչև 30	14	9,0	6,9	2,3	915,4	398	1,7	1647,0	19,6
30-40	4	32,7	14,2	5,38	2593,2	482	1,4	1206,0	74,9
40-ից ավելի	2	51,0	27,7	8,31	4071,9	490	1,3	1077,0	81,0
<b>ընդամենը</b>	<b>20</b>	<b>16,7</b>	<b>10,6</b>	<b>3,52</b>	<b>1531,2</b>	<b>435</b>	<b>1,53</b>	<b>1350,0</b>	<b>48,8</b>

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ բանջարաբուծության տնտեսական արդյունավետության միագումար ցուցանիշները բարելավվում են ապրանքային արտադրանքի կառուցվածքում 30%-ից ավելի բանջարեղենի տեսակարար կշռով ընտրովի գյուղացիական տնտեսությունների խմբերում:

Այսպիսով, ըստ ցանքատարածությունների չափերի և մասնագիտացման մակարդակի՝ բանջարաբուծության ընտրովի գյուղացիական տնտեսությունների խմբավորումը ցույց է տալիս, որ արտադրության խոշոր չափերը զուգակցվում են մասնագիտացման բարձր մակարդակի և տնտեսական արդյունավետության լավագույն ցուցանիշների հետ:

Բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման պայմաններում լավ հնարավորություններ են ստեղծվում կիրառելու անհրաժեշտ չափով օրգանական և հանքային պարարտանյութեր, արմատավորելու հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի արդյունավետ համակարգեր և արտադրության կազմակերպման առաջավոր եղանակներ:

\* Հաշվարկները կատարել ենք Ախուրյանի տարածաշրջանի Բենիամին, Կապս և Յոռոն գյուղական համայնքների ընտրովի գյուղացիական տնտեսությունների տվյալների խմբավորման և վերլուծության հիման վրա:

Բանջարաբուծության հետևողական մասնագիտացման խորացումը և արտադրության համակենտրոնացումը ենթադրում են խոշոր և լավագույն չափերով արտադրության ապահովում, բանջարաբուծական տնտեսությունների քանակի կրճատում և նրանցում անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծում: Միաժամանակ անհրաժեշտ է ավելի արդյունավետ դարձնել այն գործընթացները, որոնք կապված են տեղում աճեցվող բանջարանոցային մշակաբույսերի արտադրության, տեղափոխման, պահեստավորման, վերամշակման և իրացման կազմակերպման հետ:

Ընդհանրապես, մեր հանրապետությունում բանջարանոցային մշակաբույսերի արտադրության գործընթացը գտնվում է պատշաճ վիճակում, սակայն խնդիրներ կան պահեստավորման, մթերման, տեղափոխման և իրացման հետ կապված, որոնց պատճառով կորուստներ են լինում համակարգի տնտեսություն-շուկա շղթայում: Այս առումով, անհրաժեշտ է տարբերակել սեզոնային պարբերական ցիկլերը արտադրական ավելցուկից: Որպես առավել հիմնավորված փաստարկ կարելի է բերել գլուխ սոխի պահպանման նվազ ծախսատար եղանակների կիրառումը, որը թույլ է տալիս երկարաձգել գլուխ սոխի մարքեթինգի ժամանակաշրջանը՝ ի տարբերություն տերևավոր բանջարեղենի պարբերական լիության ժամանակ օգտագործվող եղանակների: Վերջին դեպքում անհրաժեշտ է բանջարեղենի պահպանման համար մշակել նվազ ծախսատար եղանակներ, եթե դրանց թարմ վիճակում իրացումը տնտեսապես անարդյունավետ է: Սա ավելի ճիշտ տարբերակ է համարվում, քան թարմ բանջարեղենի պահեստավորումը: Ընդ որում, սառնարանային պահեստների ապահովման գործում ընդգրկված կապիտալ ծախսերը զգալի են, և, հետևաբար դրանք պետք է ունենան օգտագործման մեծ հզորություններ այդ հաստատուն ծախսերի բաշխման համար կամ էլ պետք է օգտագործվեն բարձրարժեք և շուկայական մեծ պահանջարկ ունեցող արտադրանքը պահեստավորելու համար, որոնց իրացմամբ հնարավոր կլինի փոխհատուցել կատարված ծախսերը: Ուստի տնտեսություն-շուկա համակարգի շղթայում կորուստները նվազագույնի հասցնելու համար տնտեսապես նպատակահարմար է ստեղծել արտադրողների և իրացնողների կոոպերատիվ ընկերություններ, հատկապես սպառողական կոոպերատիվներ, որոնք գյուղատնտեսական ապրանքարտադրողի համար կարող են մթերման ավելի բարձր գներ ապահովել, ինչպես նաև ֆինանսավորել շուկաների ստեղծման գործընթացը: Գնագոյացման անհամապատասխանության և մարքեթինգի ոլորտում վարվող պասիվ քաղաքականության պատճառով (առևտրային գործընկեր փնտրելու փոխարեն սպասում են նրանց հայտնվելուն) միջանկյալ վերամշակված արտադրանքի համար (օրինակ՝ տոմատի) և այդ արտադրանքի սահմանափակ քանակության պայմաններում, գյուղացիական տնտեսությունները հիմնականում հարմարվում են գործող գների համակարգին, որոնք սահմանվում են ըստ հիմնական մրցակիցների: Վերջին տարիներին մի շարք ընկերություններ չեն կարողանում իրացնել արտադրանքի մի մասը՝ գների ոչ առաձգականության և միջազգային շուկայական գներին հարմարվելու անկարողության պատճառով (տոմատ արտադրողները չեն ցանկանում վաճառել իրենց արտադրանքը 700 ԱՄՆ դոլար գնով, երբ իրենց մրցակիցների համար ընդունելի է 400-500 ԱՄՆ դոլար գինը):

Բացի դրանից, գյուղացիական տնտեսությունների մեծ մասի մոտ դեռևս պահպանվում են մասնագիտացման ցածր մակարդակը և տնտեսավարման կիսաբնամթերային տիպը: Մեծ են ձեռքի աշխատանքի ծախսերը, համեմատաբար ցածր է բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունը, և բարձր է արտադրանքի ինքնարժեքը: Մի շարք մարզերում ու տարածաշրջաններում (հատկապես լեռնային գոտում) բանջարաբուծության ապրանքայնության մակարդակը շատ ցածր է և տեղաբաշխված է բազմաթիվ ոչ մասնագիտացված փոքր գյուղացիական տնտեսություններում:

Բանջարաբուծական տնտեսությունների մասնագիտացման խորացումը և համակենտրոնացումը նպատակահարմար է իրականացնել ոչ մասնագիտացված ենթաճյուղերի ու արտադրությունների (օրինակ՝ հացահատիկային, տեխնիկական, կերային մշակաբույսերի և այլն) կրճատման և հիմնական (գլխավոր) բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդարձակման միջոցով: Խոշոր ապրանքային բանջարաբուծական տնտեսություններ առաջին հերթին կարելի է կազմակերպել այն մարզերում ու տարածաշրջաններում, որտեղ առկա են բերրիության բարձր մակարդակով վարելահողերի մեծ զանգվածներ, ոռոգելի հողերի վրա ցանքատարածությունների տեղաբաշխման և մեծ քանակությամբ տեղական օրգանական պարարտանյութերի օգտագործման հնարավորություններ (Արմավիրի, Արարատի, Շիրակի և Արագածոտնի մարզեր): Ընդ որում, ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն նաև հաղորդակցության բարեկարգ ճանապարհների առկայությունը և արտադրանքի իրացման շուկաների ու հումքի վերամշակման ձեռնարկությունների նկատմամբ տնտեսությունների բարենպաստ տեղադիրքը:

Արտադրության միջոցների և աշխատուժի նվազագույն ծախսերի դեպքում բանջարանոցային մշակաբույսերի տնտեսապես արդյունավետ արտադրություն հնարավոր է կազմակերպել միայն մասնագիտացված տնտեսություններում ենթաճյուղերի ու արտադրությունների ճիշտ զուգակցման դեպքում: Այսպես, օրինակ, հանրապետությունում առավել տարածված մասնագիտացված տնտեսությունների թվին պատկանում են արտադրության կայուն շահութաբերության մակարդակ ունեցող կաթնամսատու տավարաբուծական-բանջարաբուծական, բանջարաբուծական-կաթնամսատու տավարաբուծական և բանջարաբուծական արտադրական ուղղվածությամբ տնտեսությունները:

Այսպես, Շիրակի մարզի Կապս, Զոռոն և Բենիամին գյուղական համայնքների հողատարածությունների մինչև 1,5 հա և բանջարանոցային մշակաբույսերի 0,3 հա-ից ավելի ցանքատարածություններով կաթնամսատու տավարաբուծական-բանջարաբուծական արտադրական ուղղություն ունեցող գյուղացիական տնտեսություններում ապրանքային արտադրանքի կառուցվածքում անասնաբուծական մթերքների տեսակարար կշիռը կազմում է 60% և ավելին, այդ թվում՝ կաթը՝ 40%-ից բարձր, իսկ բանջարեղենը՝ 25%-ից ոչ ավելի: 1ց բանջարեղենի արտադրության միջին ինքնարժեքը կազմել է մոտավորապես 13950 դրամ, իսկ շահութաբերության մակարդակը՝ 18,5-19.0%: Վերոհիշյալ գյուղական համայնքների բանջարաբուծական-կաթնամսատու տավարաբուծական արտադրական

ուղղություն ունեցող գյուղացիական տնտեսությունների ապրանքային արտադրանքի կառուցվածքում բանջարեղենի տեսակարար կշիռը կազմում է 40%-ից ավելի, իսկ կաթինը՝ 30%-ից ավելի: Ընդ որում, բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները տատանվում են 0,45-0,70 հա-ի սահմաններում, 1ց բանջարեղենի արտադրության միջին ինքնարժեքը կազմել է 9870 դրամ, իսկ շահութաբերության մակարդակը՝ 56,4%:

Ինչ վերաբերում է բանջարաբուծական մասնագիտացման արտադրական ուղղություն ունեցող գյուղացիական տնտեսություններին, ապա այստեղ բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները գերազանցում են 0,7 հա-ի սահմանները, իսկ շահութաբերության մակարդակը կազմում է 77-80%:

Կարծում ենք՝ յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության և տնտեսավարող այլ սուբյեկտների հեռանկարային մասնագիտացման արտադրական ուղղությունները սահմանելու դեպքում կարելի է տիպական տնտեսությունների օրինակով որոշել արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման լավագույն մակարդակը՝ բանջարաբուծության արտադրատեխնոլոգիական գործընթացը արդյունաբերական հիմքի վրա տեղափոխելու համար: Այդ դեպքում պետք է հաշվի առնել բնակչությանը և արդյունաբերական վերամշակող ձեռնարկություններին բանջարեղենի այն տեսակներով բավարարելու անհրաժեշտությունը, որոնց աճեցման համար առկա են բարենպաստ ագրոկլիմայական և սոցիալ-տնտեսական պայմաններ:

Բանջարաբուծության արդյունավետությունը մեծապես կախված է նաև ցանքատարածությունների կառուցվածքից և բանջարեղենի առանձին տեսակների արտադրության համակենտրոնացման մակարդակից: Այսպես, Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի Գայի, Բաղրամյանի և Տարոնիկի ընտրովի գյուղացիական տնտեսությունների խմբավորումը հնարավորություն տվեց բացահայտելու, որ լուլիկի մինչև 1,5 տ, վարունգի մինչև 2,0 տ, և գլուխ սոխի մինչև 0,7 տ արտադրություն ապահովող տնտեսություններում նրանց աճեցումը սակավարդյուն է: Ուստի տարածաշրջանի մասնագիտացված բանջարաբուծական տնտեսություններում կանխատեսվող հեռանկարում նախատեսվում է առանձին բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները հասցնել մինչև օպտիմալ չափերի. մեկ գյուղացիական տնտեսության հաշվով՝ վաղահաս կաղամբի սորտերը մինչև 2,0 հա, լուլիկը՝ 1,5 հա, վարունգը՝ 1,2-1,5 հա, սմբուկն ու պղպեղը՝ 0,3-0,5 հա և գլուխ սոխը՝ 1,0-1,5 հա: Յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությունում աճեցվելու են երկուսից-երեք, իսկ մերձքաղաքային գոտու տնտեսություններում՝ երեքից-չորս բանջարանոցային մշակաբույսեր:

Ջերմասեր բանջարաբուստանային մշակաբույսերի (լուլիկ, վարունգ, սմբուկ և վաղահաս կաղամբ) աճեցմամբ զբաղվում են Էջմիածնի տարածաշրջանի գրեթե բոլոր գյուղացիական տնտեսությունները, սակայն լավագույն տնտեսական ցուցանիշների հասել են 5 տ և ավելի բանջարեղենի համախառն բերք ապահովող տնտեսությունները (տե՛ս աղյուսակ 3):



**Աղյուսակ 3**

**Էջմիածնի տարածաշրջանի մասնագիտացված բանջարաբուծական ընտրովի գյուղացիական տնտեսություններում բանջարաբուծության համակենտրոնացման արդյունավետությունը ( 2009 թ.)\***

ընտրովի գյուղացիական տնտեսությունների խմբերում 1 տնտեսության հաշվով բանջարեղենի համախառն բերքը (տ)	խմբում տնտեսությունների քանակը	բանջարեղենի տեսակարար կշիռը (%)		արտադրվում է տնտեսությունում		բերքատվությունը (գ/հա)	1գ-ի արտադրական ինքնարժեքը (դրամ)	1գ-ի հաշվով աշխատածախսերը (մատուց)	շահութաբերության մակարդակը (%)
		ապրանքային արդյունքի կառուցվածքը	ցանքատարածությունների կառուցվածքը	բանջարեղենի ցանքատարածությունները (հա)	բանջարեղենի համախառն բերքը (գ)				
մինչև 5	27	24,1	8,6	29,0	3248,0	112	3984,0	3,9	21,6
5-7	39	49,0	13,1	49,4	11460,8	232	2139,0	2,3	29,8
միջինը	66	42,5	11,4	41,2	8157,6	198	2433,0	2,6	16,3

Բանջարաբուստանային մշակաբույսերի տնտեսական արդյունավետությունը մեծապես որոշվում է իրացման գներով, որոնք ոչ միայն պետք է ամբողջությամբ փոխհատուցեն արտադրության ծախսերը, այլև պայմաններ ստեղծեն արտադրանքի ընդլայնված վերարտադրության համար: Բանջարաբուծության մեջ տնտեսական արդյունավետության առումով շատ կարևոր է, որ աճեցվող մշակաբույսերի ամբողջ տեսականու համար իրացման գներն ապահովեն շահութաբեր արտադրություն: Որպես կանոն՝ բանջարեղենի վաղահաս արտադրանքի վրա սահմանվում են ավելի բարձր գներ, քան ուշ հասունացողների: Հետևաբար, իրացման գների և ապրանքայնության մակարդակի բարձրացման հաշվին վաղահաս արտադրանքի շահութաբերության մակարդակը անհամեմատ ավելի բարձր է:

Բանջարեղենի իրացումից ստացված գումարի ավելացման վրա ազդող կարևոր գործոն է նաև արտադրանքի որակի բարձրացումը: Շուկա մատակարարվող բանջարեղենի որակից կախված է դրա քանակը, քանի որ ոչ տիպօրինակ և անորակ մթերքները իրացվում են ավելի ցածր գներով կամ էլ ընդհանրապես հանվում են իրացվող մթերքների ընդհանուր ծավալից

\* Աղյուսակը կազմել ենք Արմավիրի մարզի մարզային վիճակագրական ծառայության տվյալների խմբավորման և վերլուծության հիման վրա:

(որպես կանոն՝ ոչ տիպորինակ արտադրանքը իրացվում է 40-50%-ից ավելի ցածր գներով): Մինչդեռ բարձր կենսաքիմիական որակով արտադրանքը (օրինակ՝ լուլիկի պտղի մեջ ոչ հյութեղեն նյութերի պարունակությունը) արդյունաբերական վերամշակման դեպքում ավելի բարձր է վճարվում:

Այնուամենայնիվ, բանջարաբուծությունը, համարվելով շատ աշխատատար, ավանդաբար դասվել է բուսաբուծության բարձր եկամտաբեր ենթաճյուղերի շարքին (տես աղյուսակ 4):

#### Աղյուսակ 4

### Արմավիրի մարզի բանջարաբուստանային մշակաբույսերի տնտեսական արդյունավետության ցուցանիշները\*

	գյուղացիական տնտեսություններին բաժին են ընկնում		բանջարաբուստանային մշակաբույսերի, համախառն բերքը (տ)	1 ց-ի ինքնարժեքը (դրամ)	1 ց-ի հաշվով աշխատանքային ծախսերը (մարդ-ժամ)	1 ց-ի հաշվով արտադրական ծախսերը (դրամ)	1 ց-ի իրացման գինը (դրամ)	շահույթը (դրամ)		շահութաբերության մակարդակ (%)
	բանջարեղենի ցանքատարածությունը (հա)	բերքատվությունը (ց/հա)						1 հա-ի հաշվով	1 ց-ի հաշվով	
վարունգ	1323.0	392.0	51863.3	5860.0	7.5	2297.0	10000	1341360	4140.0	70.6
լուլիկ	2137.0	566.7	121099.6	4730.0	6.5	2680.0	7000.0	1241690	2270.0	48.0
գլուխ սոխ	1202.0	292.6	35174.3	11440.0	9.0	3347.0	15000.0	1041650	3560.0	31.1
ծմերուկ	3376.0	308.0	103980.8	3100.0	7.5	1542.0	5500.0	1194240	2400.0	77.4
սեխ	753.0	403.0	30345.9	4490	7.0	1811.0	8000	1414530	3510	78.2

Արմավիրի մարզում բանջարաբուստանային մշակաբույսերի շահութաբերության մակարդակն ըստ նրանց տեսականու զգալիորեն տատանվում է: Այսպես, իրացման բարձր գների շնորհիվ մարզում շահութաբերության բարձր մակարդակ են ապահովում բոստան-պարենային մշակաբույսերը, համապատասխանաբար՝ ծմերուկը՝ 77,4% և սեխը՝ 78,2%, իսկ բարձր ինքնարժեքի պատճառով լուլիկինը և գլուխ սոխինը նվազել է՝ կազմելով համապատասխանաբար՝ 48,0% և 31,1%: Կարծում ենք՝ տվյալ մարզում բանջարաբուստանային մշակաբույսերի տնտեսական արդյունավետության

\* Աղյուսակը կազմել ենք Արմավիրի մարզի մարզային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծության հիման վրա:

բարձրացմանը խոչընդոտող հիմնական գործոնը ինքնարժեքի անկատար կառուցվածքն է, այսինքն՝ եթե միջազգային մակարդակի համեմատ հուժքի և աշխատուժի ինքնարժեքը ցածր է, ապա արտադրանքի արտահանման հիմնական մրցակիցների համեմատ արտադրության փոքր ծավալների պատճառով բարձր են տրանսպորտային, փաթեթավորման և միավոր աշխատուժի ծախսերը:

ՀՀ-ի բուսաբուծության ներճյուղային կառուցվածքում բանջարաբուծության մասնագիտացման խորացման, համակենտրոնացման և արտադրության արդյունավետության բարձրացման հեռանկարային ուղին խոշոր ֆերմերային տիպի և կիսաբնամթերային փոքր գյուղացիական տնտեսությունների միջև աշխատանքի բաժանման հետագա կատարելագործումն է<sup>1</sup>: Խոշոր ֆերմերային տիպի տնտեսությունները, որպես կանոն, մասնագիտանում են սահմանափակ տեսականիով և ապրանքայնության բարձր մակարդակ ունեցող բանջարանոցային մշակաբույսերի արտադրության գծով, որտեղ բանջարանոցային մշակաբույսերը զգալի ցանքատարածություններ են զբաղեցնում, և սովորաբար ստացվում է ցածր ինքնարժեքով որակյալ ու բարձր ապրանքայնության արտադրանք: Այդ դեպքում բանջարանոցային մշակաբույսերի լայն տեսականիով, հատկապես մանր կանաչիներով (նեխուր, պրաս, մաղադանոս, սամիթ, սալաթ և այլն), և տարածման սահմանափակ արեալ ունեցող այլ տեսակներով բնակչության պահանջմունքների բավարարման աղբյուր են համարվում կիսաբնամթերային փոքր գյուղացիական տնտեսությունները: Հետևաբար, խոշոր ֆերմերային տիպի տնտեսությունների նեղ մասնագիտացման և կիսաբնամթերային փոքր գյուղացիական տնտեսություններում բանջարանոցային մշակաբույսերի լայն տեսականու ընտրության շնորհիվ հանրապետությունում լուծվելու են հայրենական արտադրության հաշվին արդյունաբերական ձեռնարկություններին հուժքով, իսկ բնակչությանը՝ թարմ բանջարեղենով բավարարելու խնդիրները:

Մեր հանրապետությունում բանջարաբուծության ենթաճյուղի զարգացման արդյունավետության բարձրացման ուղին գոտիական մասնագիտացված տնտեսությունների ստեղծումն է, որը թույլ է տալիս հարաշարժություն. այսինքն՝ ձևավորվող արտադրատեխնոլոգիական համակարգը դիտել որպես ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների հերթափոխությանը համապատասխանող տարածքարտադրական ամբողջություն, որտեղ համակարգ առաջացնող արտադրական բաղադրամասերի փոխադարձ կապերը և փոխպայմանավորվածությունները դրսևորվում են ուղղաձիգ գոտիական հարահոսի միջոցով: Վերջինս միասնական արտադրատեխնոլոգիական գործընթացի մեջ է միավորում ինչպես ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների հերթափոխությունը, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրում առանձին բանջարանոցային մշակաբույսերի և նրանց տարբեր սորտերի աճեցման վեգետացիոն փուլերի տևողության տարբերությունները (օրինակ՝ ցածրադիր գոտում՝ վաղահաս, նախալեռնային գոտում՝ միջահաս և

<sup>1</sup> Տե՛ս **Վ. Մանասյան**, ՀՀ խոշոր և փոքր տնտեսությունների զարգացումը գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացման պայմաններում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, №2, էջ 164-165:

լեռնային գոտում՝ ուշ հասունացող բանջարեղենների առանձին տեսակներ ու սորտեր), որոնց նպատակն է երկարաձգել բանջարանոցային մշակաբույսերի թարմ վիճակում օգտագործելու ժամկետները, հավասարաչափ լիաբեռնել վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունները էժան ու որակյալ հումքով, ինչպես նաև ցանքի կամ սածիլման և բերքահավաքի ընթացքում առավել հավասարաչափ օգտագործել աշխատուժը<sup>2</sup>: Ընդ որում, լանդշաֆտային գոտիների ուղղաձիգ հերթափոխությամբ համապատասխան բանջարանոցային մշակաբույսերի աճեցման վեգետացիոն փուլերը կարելի է կազմակերպել այն սկզբունքով, որ նրանցից մեկում այն իր ավարտին հասնելիս հաջորդում սկսվի նույն բանջարեղենի այլ սորտերի և ուրիշ տեսակների աճեցման գործընթացը:

Բանջարանոցային մշակաբույսերի արտադրության կազմակերպումը ուղղաձիգ հարահոսի սկզբունքով պետք է միաժամանակ համապատասխանի ներտնտեսական մասնագիտացված արտադրական ստորաբաժանումների որոշակի չափերի, որոնք բավարարում են ժամանակակից տեխնիկական արդյունավետ օգտագործելու, հոսքային բարձր մեքենայացված տեխնոլոգիաների արձատավորման և աշխատանքի կազմակերպման ժամանակակից կատարելագործված ձևերի պահանջներին:

Էջմիածնի տարածաշրջանի վերոհիշյալ գյուղական համայնքների ընտրովի գյուղացիական տնտեսություններում, սկսած 2005 թվականից, բանջարաբուծության միջփուլային մասնագիտացման մակարդակի բարձրացումը թույլ տվեց յուրաքանչյուր տնտեսությունում բանջարեղենի արտադրությունը ավելացնել միջին հաշվով 1,5-1,8 անգամ, միավոր արտադրանքի հաշվով աշխատածախսերը կրճատվեցին 25-30%-ով, արտադրանքի ինքնարժեքը իջավ մոտ 25-27%-ով, իսկ ենթաճյուղի շահութաբերության մակարդակը բարձրացավ 1,5 անգամ:

Մեր հանրապետությունում բանջարաբուծության մասնագիտացման խորացման գործընթացում սեզոնայնությունը մեղմացնող ուղղաձիգ գոտիական հարահոսի սկզբունքին համարժեք մեծ նշանակություն են ձեռք բերում նաև ջերմոցային տնտեսությունները (փակ գրունտի պայմաններում սահմանափակ տեսականիով թարմ բանջարեղենի և առանձին մշակաբույսերի սածիլների աճեցումը), որոնց նպատակն է ամբողջ տարվա ընթացքում բնակչությանը թարմ բանջարեղենով ապահովելը:

Թեև վերջին տարիներին մեր հանրապետությունում դիտվում է բանջարեղենի արտադրության զգալի ավելացում, սակայն մինչև օրս բնակչությանը թարմ բանջարեղենով մատակարարումը կրում է սեզոնային բնույթ՝ դրանց պակասը հատկապես խիստ զգացվում է ուշ աշնանը, ձմռանը և վաղ գարնանը: Այսպես, լուլիկի, վարունգի և ջերմասեր այլ բանջարանոցային մշակաբույսերի զանգվածային բերքահավաքը սկսվում է հուլիսի երկրորդ տասնօրյակից և աշնանային վաղ ցրտահարությունների հետևանքով ավարտվում է հոկտեմբերի առաջին կեսին: Ուստի բնակչությունը նոյեմբերից մինչև հուլիս ամիսը զուրկ է մնում թարմ բանջարեղենի գործածությունից: Մինչդեռ բանջարեղենի գործածության գիտականորեն

<sup>2</sup> Տե՛ս **Саркисян Х.** Территориальная организация овощеводства в Армянской ССР. Автореф. дис. канд. геогр. наук. Баку, 1986, т. 7-9:

հիմնավորված ֆիզիոլոգիական չափաքանակի (տարվա ընթացքում մեկ մարդուն՝ 122 կգ) մոտավորապես 20%-ը պետք է գործածվի արտասեզոնային ամիսներին: Այստեղից պարզ է դառնում, թե բանջարեղենի արտադրության սեզոնայնությունը վերացնելու գործում որքան մեծ նշանակություն ունի փակ գրունտի բանջարաբուծության զարգացումը:

Յետբարեփոխումների վերջին տարիներին ջերմոցային տնտեսություններում տեղի են ունենում ցանքաշրջանառության փոփոխություններ, մասնավորապես, աճեցվող բանջարանոցային մշակաբույսերի ընդհանուր տեսականու ընդլայնման հետ մեկտեղ կրճատվում են վարունգի և ավելանում են լուլիկի, պղպեղի, սմբուկի և մանր կանաչիների մակերեսները: Արարատի և Արմավիրի մարզերի համեմատաբար խոշոր ջերմոցային տնտեսություններում աճեցվող բանջարանոցային մշակաբույսերի տեսականին արդեն հասցվել է մինչև 3-4 անվանման:

Ջերմոցային տնտեսությունների տնտեսական արդյունավետությունը ցույց է տրված Մասիսի տարածաշրջանի օրինակով (տե՛ս աղյուսակ 5):

### Աղյուսակ 5

#### Մասիսի տարածաշրջանի ջերմոցային տնտեսությունների տնտեսական արդյունավետության ցուցանիշները՝

	ջերմոցային տնտեսություններին բաժին են ընկնում		բանջարանոցային մշակաբույսերի համախառն բերքը (g)	1 ց-ի արտադրության ինքնարժեքը (հազ. դրամ)	1 ց-ի հաշվով կատարված աշխատանքային ծախսերը (մարդ-ժամ)	1 ց-ի հաշվով կատարված արտադրված ծախսերը (հազ. դրամ)	1 ց-ի իրացման գինը (հազ. դրամ)	Շահույթը (հազ. դրամ)		Միտոբաբերության մակարդակը (%)
	բանջարեղենի ցանքատարածությունները (հա)	բերքատվությունը (g/հա)						1 հա-ի հաշվով	1 ց-ի հաշվով	
լուլիկ	18	220	3960	31900	14	19900	60000	83600	28100	81,1
վարունգ	13	260	3380	25160	12	15000	50000	85800	24840	98,7

Ջերմոցային տնտեսությունների 80%-ից ավելին տեղաբաշխված է հանրապետության խոշոր քաղաքներին և արդյունաբերական կենտրոններին հարող տարածաշրջաններում: Էներգակիրների և արտադրության ուրիշ միջոցների գների անընդհատ աճը, արտադրանքի վրա ծախսերի աճի տեմպերը ու գների անհամարժեքությունը թույլ չեն տալիս ջերմոցային տնտեսություններում ժամանակին իրականացնել շինությունների վերակառուցում և արտադրության մեջ արմատավորել բանջարեղենի աճեցման նոր տեխնոլոգիաներ: Ջերմոցային տնտեսությունների այդպիսի վիճակը նրանցից շատերին կանգնեցնում է սննկացման եզրին: Այսպես, 2009 թ. Երևանի

մերձքաղաքային գոտում գործող ջերմոցային տնտեսություններից միայն 25% -ն էր աշխատում շահույթով (2-ից մինչև 7%): Բնակչության մեկ շնչի հաշվով 10-13 կգ ջերմոցային բանջարեղենի սպառման չափաքանակի պայմաններում Երևանում յուրաքանչյուր բնակչի փաստացի ապահովվածությունը կազմում է ընդամենը 1-3 կգ: Այդ դեպքում ոչ միայն մեծ չեն ջերմոցի օգտակար մակերեսն ու միավոր տարածքից ստացված արդյունքները ( 2008 թ. 1 մ<sup>2</sup>-ից ստացվել է 10,2 կգ ), այլև ցածր է նրանց շահութաբերության մակարդակը: Մինչդեռ, բանջարեղենի արտադրությունը շահութաբեր է համարվում այն տնտեսություններում, որտեղ նրանց աճեցման համար արմատավորված են առաջավոր տեխնոլոգիաներ: Օրինակ՝ ջերմության, ջրի և հանքային պարարտանյութերի տնտեսում ապահովող փոքրածավալ տեխնոլոգիաների արմատավորումը թույլ է տալիս լուրիկի բերքատվությունը մեկ քառակուսի մետրի վրա ավելացնել 16 -ից մինչև 31 կգ:

Վերջին տարիներին PSO ծրագրի շրջանակներում ՀՀ-ի և Նիդեռլանդների կառավարությունների միջև կնքված «փոխընթացման հուշագրում» համագործակցության գլխավոր ոլորտներից է ջերմոցային տնտեսության հետագա զարգացումը:

Ծրագրում նախատեսվում է ստեղծել նոր փոքրածավալ տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս յուրաքանչյուր քառակուսի մետր զույքային ջերմոցի մակերեսից ստանալ 30-35 կգ լուրիկ և 20 կգ պղպեղ: Ընդ որում՝ նախատեսվում է 2,2 անգամ կրճատել էներգիայի սպառումը, 2 անգամ ավելացնել բանջարեղենի բերքատվությունը, ինչպես նաև բերքահավաքի, տեսակավորման, տեղափոխման և պահեստավորման ժամանակ 30%-ով կրճատել կորուստները: Կանխատեսվող հեռանկարում նախատեսվում է բանջարեղենի աճեցման ջերմոցային տնտեսությունները հասցնել մինչև 1000 հա-ի, իսկ համախառն արտադրանքի ծավալները՝ մինչև 150-160 հազ. տ-ի, որը թույլ կտա ամբողջությամբ բավարարել ներհանրապետական պահանջները և արտադրանքի մի մասն էլ արտահանել: Բացի դրանից, եթե նկատի ունենանք նաև հանրապետության ագրոկլիմայական պայմանների ընձեռած հնարավորությունները (բարենպաստ ջերմային ռեժիմը, հարավահայաց դիրքադրության լանջերը և այլն), էներգետիկ ու արդյունաբերական ձեռնարկությունների ջերմային բազան, ապա իրական նախադրյալներ են ստեղծվում փակ գրունտի պայմաններում ամբողջ տարվա ընթացքում բանջարանոցային մշակաբույսեր աճեցնելու համար: Արտադրության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հրաժարվել ավանդական տեխնոլոգիական կառույցներից և օգտագործել լեռնային տարածքի պայմաններին հարմարեցված առավել կատարյալ փոքրածավալ կառույցներ, որոնք հնարավորություն են տալիս առավելագույնս օգտագործել արեգակի էներգիան և ստանալ էկոլոգիապես մաքուր ու որակյալ բանջարեղեն<sup>3</sup>:

Ուստի ոչ պակաս կարևոր է նաև էկոլոգիապես մաքուր և որակյալ բանջարանոցային մշակաբույսերի աճեցման խնդիրը, քանի որ շուկայական տնտեսավարման պայմաններում էկոլոգիապես մաքուր գյուղատնտես-

<sup>3</sup> Տե՛ս **Խ. Սարգսյան, Գ. Ավագյան**, Ջերմոցային տնտեսությունը որպես բանջարեղենի անընդհատ արտադրության գլխավոր միջոց, «Գյուղատնտեսական գիտությունների տեղեկագիր», 1984, № 6, էջ 6-11:

սական մթերքների արտադրությունը դառնում է ոչ միայն գնային մրցակցության չափանմուշ, այլև ենթաճյուղի մասնագիտացումը բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկը: Սոցիալ-տնտեսական առումով բացասական ազդեցություն ունեցող էկոլոգիական գործոն են համարվում բնակչության առողջության վատթարացումը՝ կապված օգտագործվող բանջարանոցային մշակաբույսերի որակի անբարենպաստ փոփոխության հետ:

Հանքային պարարտանյութի և մշակաբույսերի պաշտպանության միջոցների ոչ ռացիոնալ օգտագործումը մեծ վնաս է հասցնում ոչ միայն բնական միջավայրին, այլև հանգեցնում է բանջարաբուստանային մշակաբույսերի ոչ պատշաճ որակի ապահովմանը և բնակչության առողջության վատթարացմանը: ՀՀ-ի ջերմոցային տնտեսություններում աճեցվող փաստորեն բոլոր բանջարանոցային մշակաբույսերի մեջ առողջության համար վտանգավոր նյութերի պարունակությունը, մասնավորապես նիտրատները և թունաքիմիկատները, գերազանցում են նախատեսվող չափաքանակները: Այսպես, Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերի 6 ջերմոցներում Հայաստանի սպառողների ազգային միության գյուղատնտեսության դեպարտամենտի կատարած բանջարեղենի ժամկետային ֆիտոսանիտարական լաբորատոր վերլուծությունը ցույց է տվել, որ բոլոր ջերմոցներում նիտրատների պարունակությունը մի քանի անգամ գերազանցում է թույլատրելի մակարդակը, իսկ թունաքիմիկատները՝ 5 ջերմոցներում<sup>4</sup>:

Իհարկե, էկոլոգիապես մաքուր բանջարեղենի արտադրության հավաստագիր ստանալու համար անհրաժեշտ է խորապես տիրապետել դրանց արտադրության սկզբունքներին, այսինքն՝ անհրաժեշտ է ճշտել ամբողջ արտադրատեխնոլոգիական շղթան՝ սկսած բանջարաբուստանային մշակաբույսերի աճեցումից մինչև արտադրանքի իրացումը և արտահանումը: Ուստի առաջնահերթ է դարձել մշակել էկոլոգիապես մաքուր արտադրանքի ստացման համապատասխան ծրագիր և որպես միջնաժամկետ ռազմավարություն այն դնել գործողության մեջ, որը էապես կնպաստի հանրապետության բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության մասնագիտացման խորացմանը ու ենթաճյուղի տնտեսական արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ագրոպարենային համակարգի առևտրային հաշվեկշռի բարելավմանը:

Այսպիսով, բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության շարժընթացը և տեմպերը, բանջարեղենի լայն տեսականիով բնակչությանը, իսկ վերամշակող արդյունաբերությանը տիպօրինակ հումքով ապահովվածության մակարդակը մեծապես որոշում են ՀՀ-ում քննարկվող ենթաճյուղի մասնագիտացման խորացման և համակենտրոնացման բարձրացման հնարավորությունները: Ըստ լանդշաֆտային գոտիների ուղղաձիգ հերթափոխության՝ բանջարաբուծության տեղաբաշխումը և գոտիական մասնագիտացումը համարվում են բանջարաբուստանային մշակաբույսերի առանձին տեսակների արտադրության ծավալների աճի և միավոր արտադրանքի հաշվով նյութադրամական ու աշխատանքային ծախսերի կրճատման կարևոր գործոններ: Բացի դրանից, բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության կազմակերպումը միջգոտիա-

<sup>4</sup> Տե՛ս «Деловой экспресс» օրաթերթ, № 22, հունիս, 2010 թ.:

կան ուղղահայաց հարահոսի սկզբունքով և փակ գրունտի՝ ջերմոցային տնտեսություններում թույլ է տալիս շուրջ տարին ֆիզիոլոգիական չափաքանակներով բնակչությանը ապահովել բանջարեղենի հաշվեկշռված լայն տեսականիով, իսկ վերամշակող արդյունաբերությանը՝ հունքով:

**ВОЛОДЯ МАНАСЯН – Углубление специализации и концентрация производства – основа повышения экономической эффективности овощеводства в РА.** – Актуальная задача армянского сельского хозяйства – полностью обеспечить страну отечественным овощным и бахчевым сырьём и выделить часть его на экспорт. Чтобы успешно решить её, необходимо углублять специализацию и повышать концентрацию производства.

Как правило, овощеводство концентрируется в пригородных и сырьевых поясах. В первом случае создаются специализированные хозяйства, где овощи выращиваются как на открытом, так и в защищённом грунте. Что касается производства овощей в сырьевых поясах, то здесь оно создаётся с учётом требований перерабатывающей промышленности, т. е. овощи должны быть высококачественными и равномерно поступать на переработку. В статье рассмотрены наиболее актуальные вопросы размещения и специализации овощеводства, раскрыты основные факторы повышения его экономической эффективности на основе увеличения оптимальных размеров крестьянских хозяйств, улучшения качества сырья и внедрения механизированной технологии возделывания, уборки и послеуборочной обработки. Кроме того, даны рекомендации, как усовершенствовать в ближайшей перспективе концентрацию этой важной отрасли.

**VOLODYA MANASYAN – Intensification of Specialization and Concentration of the Production, Truck Gardening Economic Productivity Increase in the RA.** – The organization of vegetable cultivation based on the intensification of specialization and the concentration boost is quite up-to-date in terms of transition to the market economy in consideration of the full provision of countries with domestic vegetable farming stuff and the export allocation of some of its parts. As a rule, vegetable growing is concentrated in the suburban and raw material zones. In the first case specialized economies are created, where the open ground vegetable growing is combined with the covered ground vegetable growing that allows providing the town population with fresh vegetables all the year round.

In regard to the production of vegetables in the raw material zones the processing industry requirements are taken into account, i.e. the vegetables should be of high quality and should undergo regular processing. Thus the article tackles more up-to-date issues concerning truck gardening specialization and allocation. It also reveals the principal factors of economic productivity boost of this subindustry based on the increase of the optimal size of farms, raw material quality improvement and the launch of mechanized cultivation technology, harvesting, post-harvesting cultivation. The article likewise provides some recommendations regarding subindustry specialization and concentration improvement for the near-term outlook.